ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 267 – Ա **27 մարտի 2019 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի N 192Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ի մասի և 19-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման N 3 հավելվածի 32-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի» 4-րդ կետի 2-րդ ենթակետի, 7-րդ և 15-րդ կետերի պահանջները

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2010 թվականի հունիսի 17-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի անվանական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2007 թվականի ապրիլի 26-ի N 83-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 192-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝ որոշման 1-ին կետում

1) «Հարությունյան Կարեն Հայկի /ՏԻՄ ներկայացուցիչ/» բառերից հետո լրացնել «երեք տարի ժամկետով» բառերով.

2) «Ավագյան Բելլա Շահենի /վերադասի ներկայացուցիչ/» բառերը փոխարինել «Հովհաննիսյան Ռոբերտ /վերադասի ներկայացուցիչ/-երեք տարի ժամկետով» բառերով.

3) «Առաքելյան Հրանտ Տարոնի /վերադասի ներկայացուցիչ/» բառերը փոխարինել «Հարությունյան Արամ /վերադասի ներկայացուցիչ/-երեք տարի ժամկետով» բառերով:

27.03.2019

ՄԱՐԶՊԵՏ
Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

Digitally signed by SANOSYAN GNEL 1710830069

ք. Գավառ